Խ. Ա. Թորոսեան, Թագակիրների Պատմութիւնն Ու Գովաբանութիւնը Որպէս Զաքարեան Հայաստանի Պատմութեան Սկզբնաղբիւր, բնագրի թարգմանութեամբ եւ մեկնաբանութիւններով հանդերձ, Հայաստանի ԳԱ Հրատարակութիւն, Երեւան, 1992, 611 էջ։

Հայաստանի պատմութիւնը ԺԲ. դարի կէսերից մինչեւ ԺԳ. դարի սկիզբը հայ ժողովրդի դարաւոր ազատագրական պայքարի փառաւոր մի շրջան է, երբ սելջուկներից ազատագրւում է երկրի զգալի մասը եւ վերականգնւում ԺԱ. դարում կորցրած պետականութիւնը։ Հայաստանի ֆէոտալական ռազմական ուժը, որը Բիւզանդիայի, ապա սելջուկեան նուաճումների պատճառով մասամբ կազմալուծուել էր եւ մասամբ հեռացել երկրից՝ նշուած ժամանակահատուածում աստիճանաբար կազմաւորւում է որպէս բանակ, ֆէոտալական միջավայրում առաջ է գալիս նոր աւագանի ի դէմս Զաքարեան իշխանական տոհմի, որը համախմբելով դեռեւս գոյատեւած ֆէոտալական դասը՝ ստեղծում է ուժեղ բանակ, վտարում երկրից նուաճողներին եւ հիմնում անկախ իշխանութիւն։ Այդ իշխանութիւնը պատմագիտութեան մէջ անուանւում է Զաքարեան իշխանութիւն, իսկ երկիրը՝ Զաքարեան Հայաստան (Արշակունեաց կամ Բագրատունեաց Հայաստանի նմանութեամբ)։

Նրա տարածքը, Գարեգին Յովսէփեանի ճիշդ դիտողութեամբ, գերազանցում էր Բագրատունեաց եւ Սիւնեաց թագաւորութիւնների ընդհանուր տարածքին։

Պայքարի տարիներին Զաքարեանները համագործակցել են Վրաց թագաւորութեան հետ, սկզբնապէս նրանց գօրքը կռուել է վրաց բանակի կազմում։ Զաքարեանների աւագանին (Սարգիս Մեծ գօրավարը, նրա որդիներ Զաքարէն եւ Իւանէն, եղբօրորդիները եւ միւսները) ազդեցիկ դիրք են գրաւել վրաց արքունիքում, նպաստել Վրաստանի հզօրացմանը։

ԺԲ.-ԺԳ. դարերում ազատագրական պայքարի մասին հայ պատմագրութեան մէջ գրուել է բաւականին շատ, լուսաբանուել են ինչպէս ազատագրական պայքարը՝ այնպէս էլ նորաստեղծ իշխանութեան կարգավիճակը, վարչաքաղաքական կարգը, սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները, համագործակցութիւնը Վրաց թագաւորութեան հետ։ Դրա շնորհիւ պատմագիտութիւնը որոշակի պատկերացում ունի նշուած դարաշրջանի Հայաստանի քաղաքական եւ սոցիալ-տնտեսական կեանքի մասին։

Բայց ժամանակի ընթացքում փոխուում են գիտութեան պահանջները. այժմ հայ պատմագիտութեան առջեւ ծառացել է կարեւոր խնդիր՝ շարունակել դարաշրջանի պատմութեան ուսումնասիրութիւնը՝ համագործակցելով միւս գիտութիւնների հետ (իրաւագիտութեան, հնագիտութեան, դրամագիտութեան, հերալտիկայի, աղբիւրագիտութեան եւ այլն)։ Անշուշտ, այդպիսի համագործակցութիւն եղել է նաեւ նախկինում, բայց այն կատարուել է նեղ շրջանակներում, արուել են միայն առաջին քայլերը։

Այժմ աւելի խորը պէտք է ուսումնասիրուեն տուեալ ժամանակաշրջանի հասարակութեան զարգացման օրինաչափութիւնները՝ նրա ինստիտուտները, պարզաբանուեն մասնագիտական տերմինները, աւելի լայն օգտագործուեն յարակից գիտութիւնների տուեալները։ Այս տեսակէտից շատ ուշագրաւ է իրաւագիտական գիտութիւնների դոկտոր Խ. Թորոսեանի վերջերս լոյս տեսած գրախօսուող աշխատութիւնը։

Զաքարեան Հայաստանի պատմութեան մի շարք կարեւոր (կ'ասէինք՝ առաջնային) հարցերի գիտական պարզաբանման համար մեծ արժէք է ներկայացնում վրաց Թամար թագուհու (1184-1213) անանուն պատմիչի երկը, որի խորագիրն է՝ Թագակիրների Պատմութիւնն ու Գովաբանութիւնը։ Նախկինում, 1936 թուին, այն թարգմանուել է ռուսերէն։ Լ. Մելիքսէթ Բէկի թարգմանութեամբ նրա փոքր հատուածը լոյս է տեսել հայերէն[1]։ Այժմ առաջին անգամ լոյս է տեսնում երկի հայերէն ամբողջական թարգմանութիւնը։

Սոյն աղբիւրի թարգմանութիւնը կարեւորում է նրանով, որ նրա տուած տեղեկութիւնների օգնութեամբ հնարաւոր է լուսաբանել մի շարք հարցեր, որոնց մասին հայկական աղբիւրները բաւարար չափով տուեալներ չեն հաղորդում, ինչպէս նաեւ յստակութիւն մտցնել դարաշրջանի հայ-վրացական քաղաքական յարաբերութիւններին վերաբերող հարցերում։ Խ. Թորոսեանի նպատակն էլ եղել է նախ սոյն կարեւոր սկզբնաղբիւրը մատչելի դարձնել հայագէտ պատմաբաններին եւ երկրորդ՝ պատմաիրաւագիտական քննութիւն կատարել ԺԲ.-ԺԳ. դարերի պատմութեան մի քանի հանգուցային հարցերի շուրջ։ Այդ քննութիւնը տրուած է որպէս մեծածաւալ «Առաջաբան-ուսումնասիրութիւն» (227 էջ) եւ ըստ էութեան՝ ինքնուրոյն աշխատութիւն է։

«Առաջաբանի» առաջին երկու գլուխները նեղ բանասիրական-վրացագիտական բնոյթի են եւ պէտք է գրախօսուեն համապատասխան մասնագէտների կողմից։ Դարաշրջանի պատմութեա-

նը, պատմական աշխարհագրութեանն ու ազգաբնակչութեանն են վերաբերում Գ.-Ե. գլուխները։ Գ. գլուխը վերնագրուած է «Հայաստանն ու հայերը Թագակիրների պատմութեան գովաբանութեան մէջ». այն բաժանւում է երկու խոշոր մասերի՝ «Սոմխեթի-Սոմխիթի» (էջ 116-150) եւ «Սոմեխնի-Սոմխիթարնի» (էջ 150-166)։

Պարզաբանելով սոյն հարցը՝ Խ. Թորոսեանը գրում է որ վրացիները հայերին անուանում են «սոմեխի», իսկ երկիրը «Սոմխեթի», սակայն «Թագակիրների Պատմութեան» մէջ Սոմխեթի երկրանունը բացակայում է եւ գործածւում է Սոմխիթի տեղանունը։ Խ. Թորոսեանի կարծիքով՝ դրանք համարժէք են, եւ մէկը միւսի տարբերակն է։ Սակայն վրացագիտութեան մէջ այդ երկուսը զանազանւում են. Սոմխեթի նշանակում է Հայաստան, իսկ Սոմխիթի՝ ստորին Քարթլի (Քվեմօ Քարթլի)։ Եթէ այդպէս է՝ ապա «Թագակիրների Պատմութիւն»ը չի կարող հայ ժողովրդի պատմութեան սկզբնաղբիւր լինել[2]։

Վկայակոչուած են վրացագէտների տեսակէտները (Ի. Ջաւախիշվիլու եւ նրան հետեւող միւս գիտնականների դրոյթները)։ Այնուհետեւ Խ. Թորոսեանը հիմնաւորում է իր դրոյթը՝ թէ «Թագակիրների Պատմութեան» մէջ «Սոմխիթի» բառը հանդիպում է 15 անգամ եւ միշտ՝ որպէս Հայաստան (մէջբերուած են բոլոր 15 օրինակները)[3]։ Խ. Թորոսեանը դրանից եզրակացնում է, որ «Թագակիրների» հեղինակը բերուած օրինակներում նկարագրել է դէպքեր, որոնք տեղի են ունեցել Հայաստանում, բայց միշտ Սոմխեթիի փոխարէն գրել է Սոմխիթի, որովհետեւ տարբերութիւն չի դրել այդ երկուսի միջեւ[4]։

«Թագակիրների Պատմութեան» մէջ հայերը լիշատակւում են «սոմեխի» եւ «սոմխիթարնի» եզրոյթներով։ Ինչպէս լայտնի է՝ առաջին տերմինը նշանակում է հայեր. «պղտորուած է» երկրորդի իմաստը։ Ս. Ղաուչիշվիլին եւ Կ. Կեկելիձէն «սոմխիթարնի» բառը բացատրում են որպէս Սոմխիթի բնակիչներ, իսկ նրանք, ըստ այդ վրացագէտների, հայեր չեն։ Ա. Բաքրաձէի կարծիքով «սոմխիթարնի» նշանակում է «ստորին քարթլեցիներ»։ Այս դրոյթը նախորդ դրոյթի տրամաբանական շարունակութիւնն է[5]։

«Պատմութեան» մէջ «սոմխիթարնի» էթնիկական անունը լիշատակւում է բազմիցս։ Թուարկելով համապատասխան օրինակները[6]՝ Թորոսեանը մատնանշում է, որ սոմխիթարները միշտ լիշում են քարթվելներից անջատ. նրանք ապրում են որոշակի տարածքում, որը դուրս է Քարթլիից, այն է՝ Սոմխիթում, այսինքն՝ Հայաստա-

նում։ «Սոմխիթարնի»ի "ar" ածանցը ցոյց է տալիս ծագումը բնակատեղիից (տարածքից)[7]. յոգնակի ձեւն է "ar-ni" (օր. օդիշարնի, սամցխեթարնի եւ այլն)[8]։ Ըստ այսմ եզրակացնում է Խ. Թորոսեանը՝ «սոմխիթարնի» նշանակում է Սոմխիթի բնակիչներ։

Թորոսեանը բացատրում է, որ «սոմխիթ-ար-նի» բառն առաջացել է Սոմխիթի երկրանունից եւ նշանակում է սոմխիթցիներ։ Բայց վրացերէնում «հայ» բառի յոգնակի ձեւն է «սոմխեթ-նի». դա նշանակում է, որ մի դէպքում տեղանունն առաջացել է ցեղանունից, միւս դէպքում՝ ցեղանունը տեղանունից[9]։ «Թագակիրների»ի հեղինակը մէկ հայերին անուանում է նրանց ցեղանունով (սոմեխնի), մէկ ցեղանունը մակաբերում է նրանց երկրանունից։ Ճիշդ այդպէս էլ՝ կախերի, հերերի եւ մեսխերի անուան դէպքում[10]։

Չորրորդ գլուխը վերնագրուած է «Զաքարեանները "Թագակիրների Պատմութեան եւ Գովաբանութեան" մէջ»[11]։ Այս գլուխը բաղկացած է երեք մասից՝ Զաքարեանների տոհմածառը, տոհմանունը եւ ազգային-կրօնական պատկանելիութիւնը։ Խ. Թորոսեանն անդրադառնում է Զաքարեանների այն ներկայացուցիչներին, որոնք վկայուած են Թագակիրների Պատմութեան մէջ (դրանք են Սարգիս Մեծը, նրա որդիները՝ Զաքարէն եւ Իւանէն, առաջինի որդի Շահնշահը, Սարգսի եղբայր Վահրամը՝ իր որդիներով եւ թոռներով։ Ընդ որում Վահրամը նշուած է միայն թարգմանուող աղբիւրում)։ Տրուած են նաեւ Զաքարեանների երկու կրտսեր ճիւղերի՝ Թմոգուեցիների եւ Ախալցխացիների, ինչպէս նաեւ տոհմի բոլոր ճիւղերի ամփոփիչ տոհմածառերը[12]։

Վրացագիտութեան մէջ Զաքարեանների տոհմը կոչւում է Մխարգրձելի, իսկ հայագիտութեան մէջ՝ Զաքարեան եւ Երկայնաբազուկ։ Նրանց Մխարգրձելի է անուանում նաեւ «Թագակիրների Պատմութեան» հեղինակը։ Բայց վրացագէտները ձգտում են «ապացուցել», թէ Մխարգրձելիները հայ չեն (յատկապէս՝ Ս. Ջանաշիան), թէ «Մխարգրձելի» ոչ թէ ազգանուն է (մականուն), այլ՝ տոհմանուն։ Այդ հողի վրայ, վերջին տասնամեակներում ծագել են վէճեր[13]։

Քննելով Մխարգրձելի-Երկայնաբազուկ անուանումների ծագման հարցը՝ Խ. Թորոսեանը մատնանշում է, որ «Թագակիրների Պատմութեան» հեղինակը առաջինն է վրաց մատենագրութեան մէջ Զաքարեաններին անուանում «Մխարգրձել», Սարգիս Մեծի ծագումը կապելով պարսից Արտաքսերքսէս Երկայնաբազուկի տոհմի հետ։ Ըստ Թորոսեանի՝ Մխարգրձել-Երկայնաբազուկ մականուան ակունքը ոչ թէ բնական՝ այլ գրքային ծագում ունի։

«Մխարգրձելի» եզրոլթի աղբիւրներն են յունա-հռոմէական երկերը։ Լատինական աղբիւրներում արքան կոչւում է «լոնգի-մանուս» (երկար ձեռք), նոյնը յունարէնում՝ «մակրոխէյր» եւ պարսկերէնում՝ «դիրազ-դեստ». «բազուկ» անունը եւ «մակրո-խէյր» յունարէն բառը թարգմանել է «Մխարգրձելի»[14]։ Այսպիսով, եզրակացնում է Թորոսեանը, «Երկայնաբազուկ» բառը մեր օրերում հայագէտների ստեղծած բառը չէ, ինչպէս կարծում են վրացագէտները. այն գործածուել է հնում։ Թորոսեանը գտնում է, որ Զաքարեանները անուանուել են «Մխարգրձելի» ԺԲ. դարի 20-ական թուականներին, երբ հայերը Դաւիթ Շինարարի բանակում կուում էին սելջուկների դէմ. առաջինը այդ անունը կարող էր կրել Սարգիս Մեծի հայրը՝ Զաքարիա Ա-ն։

Հինգերորդ գլուխը՝ «Զաքարեանների վերելքն ու ինքնուրոյնութիւնը»՝ պատմագիտութեան համար, թերեւս, ամենակարեւորն է։ Այստեղ քննւում է Զաքարեան Հայաստանի քաղաքական կարգավիճակը (ստատուսը)։

Զաքարեանների կարգավիճակը որոշելիս, գրում է հեղինակը, պատմագիտութեան մէջ կատարուել եւ կատարւում է շատ սկզբունքային սխալ, որ միանշանակ է նրանց պատմութեան ամբողջ ժամանակաշրջանի համար։ Այնինչ՝ Զաքարեանների պատմութիւնը բաժանւում է մի քանի ժամանակահատուածների, որոնք իրենց հերթին բաժանւում են ենթաշրջանների։

Այդ ժամանակահատուածներն են.

1. Զաքարեաններն իրենց սկզբնական բնակութեան վայրում,

2. Զաքարեանները Տաշիր-Զորագետում (նրանք Կիւրիկեան թագաւորների վասալներն են),

3. ԺԲ. դարի 10-20-ական թուականներին վրաց թագաւոր Դաւիթ Շինարարը վերացնում է Կիւրիկեանների թագաւորութիւնը եւ նրա տարածքը միացնում Վրաստանին։ Այս ժամանակուանից Զաքարեանները, դարձեալ գտնուելով հայրենիքում, յայտնւում են վրաց քաղաքական համակարգում։

Սկսում է որակապէս նոր ժամանակաշրջան, որը բաժանւում է փուլերի.

1. Զաքարեանները վրաց թագաւորների, ապա Օրբելիների, նորից վրաց թագաւորների (1177-ից) վասալներ են մինչեւ 80-ական թուականների կէսերը,

2. Զաքարեանների պատմութեան ամենակարեւոր փուլը՝ հզորութեան բարձրակէտը ինքնուրոյնութեան շրջանն է։ Դրա առանձին ենթափուլերն են.

ա. սկզբնական, ինքնուրոյնացման շրջան, որն իրաւական ձեւակերպում է ստանում 1185 թուին եւ տեւում է մինչեւ 1199 (Անիի ազատագրումը) կամ ամենաուշը՝ մինչեւ 1203 թուականը (Դուինի ազատագրումը),

բ. ինքնուրոյնութեան շրջան՝ ԺԲ. դարի վերջից կամ ԺԳ. դարի սկզբից մինչեւ մոնղոլական տիրապետութեան հաստատումը,

գ. Զաքարեանների թուլացման եւ պատմական ասպարէզից վերանալու շրջան ԺԳ. դարի կէսերից մինչեւ ԺԴ. դարի վերջ։ Այս ժամանակաշրջանը եւս ունի ենթաշրջաններ[15]։

Թուարկուած փուլերից հեղինակը քննում է միայն այն ժամանակահատուածները, որոնք արտայայտուած են սկզբնաղբիւրում՝ «Թագակիրների Պատմութեան» մէջ։

Միւս ժամանակաշրջանների պատմութիւնը քննւում է առանձին մենագրութեան մէջ, որը հեղինակը նախապատրաստել էր հրատարակութեան[16]։

Խ. Թորոսեանն իրաւացիօրէն ընդգծում եւ կարեւորում է այն հանգամանքը, որ Զաքարեանների կարգավիճակը որոշելիս անհրաժեշտ է հաշուի առնել տուեալ ժամանակաշրջանում Զաքարեանների եւ վրաց պետութեան յարաբերութիւնների բնոյթը՝ աւելի կամ պակաս կախուածութիւն Վրաստանից, անկախութիւն եւ այլ հանգամանքներ[17]։ Շատ տեղին դիտողութիւն է, քանի որ վրաց եւ հայ պատմագիտութեան մէջ Զաքարեանների պատմութեան պարբերացման ու կարգավիճակի էական փոփոխութիւնները պարզապէս անտեսւում են։

Ցաւոտնի է, որ Սարգիս Մեծը նշանակուել է վրաց ամիրսպասալար 1185 թուին, իսկ Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու արձանագրութեան համաձայն՝ նա ամիրսպասալար էր 1181 թուին։ Խ. Թորոսեանը աւելի մանրամասն, քան իր նախորդները (Լ. Բաբայեան, Ց. Մանանդեան)՝ բացատրում է այս թուացող հակասութիւնը, որը շփոթութեան մէջ է դրել նախորդ ուսումնասիրողներից ոմանց։ 1181 թուին (գուցէ առաջ) Սարգիսը եղել է հայկական զօրամասերի հրամանատար (ամիրսպասալար), իսկ 1185-ին նշանակուել է հայոց եւ վրաց ամիրսպասալար[18]։

Զաքարեան Հայաստանի պետական-իրաւական կարգավիճակի հարցը լուծող փաստ է վրաց պատմիչի վկայութիւնը այն մասին, որ Թամար թագուհին Սարգիս Զաքարեանին նշանակելով ամիրսպասալար՝ շնորհել է նրան նաեւ Լոռին, որպէս սամթաւրո եւ սաթաւադո. այդ պահից էլ սկսւում է Զաքարեան Հայաստանի

ինքնուրոյնութիւնը։

Սոյն փաստը հայ եւ վրաց պատմագիտութեան մէջ լիովին անտեսուել է, ի հարկէ տարբեր դրդապատճառներով։

Արդ, գրում է Խ. Թորոսեանը, ո՞վ է մթաւարը եւ ի՞նչ է սամթաւրոն։ Վրացագէտների վկայութեամբ (իրաւագէտ Ի. Սուրգուլաձէ, պատմաբան Օ. Սոսելիա) մթաւար բառը բազմիմաստ տերմին է։ Այն նշանակում է դիդեբուլ (մեծամեծ), էրիսթաւ (թագաւորի պաշտօնեայ), սամթաւրոյի կառավարիչ-հրամանատար, անկախ քաղաքական միաւորի տէր, տիրակալ-թագաւոր։ Իսկ սամթաւրո նշանակում է անկախ քաղաքական միաւոր, սուվերէն պետութիւն[19]։ Այս նոր կարգավիճակը հիմք է տալիս Խ. Թորոսեանին իրաւացիօրէն եզրակացնելու, որ «Լոռի-Տաշիրը», որ մինչ այդ գտնուում էր վրացական պետութեան կազմի մէջ ու նրա վարչատարածքային միաւորներից էր, հաւանաբար էրիսթաւութեան ձեւով, դառնում է առանձին՝ քաղաքական միաւոր՝ վրաց պետութեան տարածքային կազմից դուրս, իսկ դրա կառավարիչը՝ ինքնուրոյն տիրակալ։ Անշուշտ, չպէտք է կարծել, թէ այդ ինքնուրոյնութիւնը դարձաւ բացարձակ. նախկին կախուածութեան որոշ նշաններ, որոշ ժամանակ դեռ պահպանուում էին, բայց հիմնականը, գլխաւորը կատարուած էր. փաստական ինքնուրոյնութիւնը ձեռք էր բերուել եւ այն գնալով աւելի խորանում եւ լայնանում էր[20]։

«Պատմութեան» հաղորդած տուեալներով Խ. Թորոսեանը հիմնաւորում է իր եզրակացութիւնը Զաքարեանների ինքնուրոյնութեան մասին. արշաւանքների ժամանակ Զաքարեանների զօրքը որպէս կանոն գործում է առանձին վրաց (թագաւորի) բանակից։ Դա նշանակում է միայն մի բան՝ ինքնուրոյնութիւն[21]։ Առանձին դէպքերում կուում էր հայ-վրացական միացեալ զօրքը (օրինակ՝ Շամքորի գրաւման ժամանակ). 1185-ից Զաքարեանների «տունը» (նստավայրը) դառնում է Լոռին, իսկ 1199-ից՝ Անին։ Այսինքն նրանք ապրում էին ոչ թէ Տփղիսում, այլ իրենց սամթաւրոյում[22]։

Վրացերէնում մթաւար նշանակում է թագաւոր, իսկ սամթաւրո՝ նաեւ թագաւորութիւն։ Բայց հայերէնում թագաւորութիւն կոչւում է միայն այն քաղաքական միաւորը, որը գլխաւորում է թագաւորը։ Այդ պատճառով՝ Խ. Թորոսեանը Զաքարեանների քաղաքական կազմաւորումն անուանում է «իշխանա-պետութիւն»՝ որովհետեւ դա պետութիւն էր, որը գլխաւորում էին իշխանները, այլ ոչ՝ օծեալ թագաւորները։ Բայց Զաքարէն կեանքի վերջում (վերջին 10-15 տարիներին) այնքա՛ն էր հզօրացել՝ որ ժողովուր-

դը նրան անուանում էր թագաւոր[23]։ Աւելացնենք, որ ոչ միայն ժողովուրդը՝ այլեւ ազնուականները Զաքարեանների տան գահերէցներին համարում էին թագաւոր։ Այդ մասին բազմաթիւ վկայութիւններ կան վիմական արձանագրութիւններում։

Այսպիսով, եզրակացնում է Խ. Թորոսեանը, «Թագակիրների Պատմութեան» հեղինակի տեղեկութիւնները Զաքարեանների եւ վրաց թագաւորների յարաբերութիւնների մասին ցոյց են տալիս, որ Զաքարեանները Թամարի թագաւորութեան առաջին իսկ տարիներին հասնում են ինքնուրոյնութեան եւ վրաց պետութիւնը ճանաչում է Զաքարեանների ինքնուրոյնութիւնը։ Դրանից յետոյ Զաքարեանների քաղաքական կապերը Վրաստանի հետ ոչ թէ վասալական էին՝ այլ միջպետական, քանի որ նրանք հանդէս են գալիս որպէս վրաց թագաւորների դաշնակիցներ[24]։

Այս դրոյթը հայ պատմագիտութեան մէջ հիմնաւորում է առաջին անգամ. այն նպաստում է աւելի լաւակ եւ իրական պատկերացնելու Զաքարեան Հայաստանի կարգավիճակը, նրա սուվերէնութեան աստիճանը եւ փոխ-յարաբերութիւնների բնոյթը վրաց թագաւորութեան հետ։

Խ. Թորոսեանի առաջ քաշած դրոյթի երկու գլխաւոր կէտերն են՝ Հայաստանի անկախութիւնը սամթաւրոյի կարգավիճակով եւ նրա դաշնակից յարաբերութիւնները Վրաց թագաւորութեան հետ։

Դա միանգամայն նոր մօտեցում է Զաքարեան Հայաստանի քաղաքական կացութեան նկատմամբ 1185-ԺԳ. դար, եւ կարող է որոշ տարակուսանք առաջացնել, քանի որ տասնամեակներ շարունակ ուսումնասիրութիւնները կատարուել են այլ սկզբունքով։ Ինքը՝ հեղինակը «Առաջաբան»ի վերջում գրում է, որ ծանօթանալով սոյն ուսումնասիրութեանը՝ ուսումնասիրողի մօտ կ'առաջանան հարցեր, զատ նրանցից, որոնք բացատրուել են։ Բոլոր այդ հարցերի (կամ նրանց մեծ մասի) պատասխանը տրուած է նոյն հեղինակի երկու այլ մենագրութիւններում, որոնցից մէկը նուիրուած է Զաքարեաններին, միւսը՝ Զաքարեան Հայաստանին[25]։

Շատ ցաւալի է, բայց նշուած երկու մենագրութիւնների հրատարակումը յետաձգուել է անորոշ ժամանակով հեղինակի վաղաժամ մահուան պատճառով։ Իսկ նրա կողմից առաջարկուած նոր մեկնաբանութիւնները սկզբունքային նշանակութիւն ունեն Զաքարեան Հայաստանի քաղաքական կացութիւնը պատմա-իրաւական իրական հենքի վրայ հասկանալու համար։ Այդ պատճառով՝ նպատակայարմար ենք համարում լրացուցիչ մի քանի փաստարկումներ բերել յօգուտ Խ. Թորոսեանի դրոյթի՝ յուսալով որ

նրանք կը նպաստեն նրա տեսակէտների անաչառ գնահատմանն ու արժէքաւորմանը։

Ինչպէս 1185 թուին Լոռին դառնում է սամթաւրօ՝ Սարգիս ամիրսպասալարի որդիները՝ Զաքարէն եւ Իւանէն վրաց արքունիքում վարում էին ոչ բարձր պաշտօններ, Զաքարեանների տան միւս ներկայացուցիչների հետ մասնակցում Վրաստանի մղած պատերազմներին եւ աւարտից յետոյ ներկայանում վրաց թագաւորներին[26]։ Դրա հետ մէկտեղ՝ Զաքարէի եւ Իւանէի նստավայրը մընում էր Լոռին (այլ ոչ թէ Տփղիսը)։ «Թագակիրների»ի հեղինակը գրում է, որ 1191 թուին ամիրսպասալարի պաշտօնը չնորհուեց Զաքարէին, «որ նստում էր հայերի թագաւորների տեղում եւ տէրն էր Լոռու»[27]։

Լոռին Զաքարեանների ժառանգական տիրոյթ լինելու փաստը հաստատւում է նաեւ Սանահին-Հաղբատ վանքերի բազմաթիւ արձանագրութիւններով, իսկ 1189 թուին Զաքարէն եւ Իւանէն Սանահնում կառուցեցին տոհմական տապանատուն[28]։ Այսպիսով, Սարգիս Մեծի մահից (1187) յետոյ էլ Լոռին մնում էր Զաքարեանների սամթաւրոն։

Զաքարեանների գլխաւոր տան կարգավիճակը (մի կողմից՝ անկախութիւն, միւս կողմից՝ «ծառայութիւն» վրաց արքունիքում) հակասութեան տպաւորութիւն է թողնում։ Սակայն «հակասութիւնը» միայն թուացող է եւ հարթւում է Խ. Թորոսեանի բացատրութեան չնորհիւ, որ 1185 թուին Զաքարեաններն ու Վրաց թագաւորութիւնը դառնում են դաշնակիցներ։

Զաքարեանները վրաց արքունիքում ստանում էին պաշտօններ (1191-ին՝ ամիրսպասալարի կամ գերագոյն հրամանատարի, մսախուրթ-ուխուցէսի կամ արքունի վեզիրի եւ այլ)։ Որպէս դաշնակիցներ՝ Վրաց թագաւորութիւնն ու Զաքարեանները (այսինքն՝ Հայաստանը) հարկ եղած դէպքում պատերազմում էին միասին, բայց կարող էին պատերազմել նաեւ առանձին։

Օրինակ, Իւանէն մասնակցել է Առան ձեռնարկած մեծ արշաւանքին, բայց նրա զօրքը կռւում էր «առանձին» եւ միայն Գեղարքունիքում։ «Թագակիրների»ի հեղինակը գրում է. «Մսախուրթ-ուխուցէս Իւանէն, առանձին, տուն ուղարկելով մեծ զօրքն ու անթիւ աւար, խաչինեցի դիդեբուլներին բերեց թագաւորի առաջ[29]։ Ընդ որում՝ Իւանէի «տուն» ասելով պատմիչը նկատի ունի Անին։ Միաժամանակ Առանում կռուող վրացական բանակը Գանձայից [իմա՝ Գանձակից] ու այլ քաղաքներից հարկ առնելով՝ յաղթանակած վերադարձան իրենց թագաւորութիւնը ...»[30]։

Զաքարեանների կարգավիճակը պարզելու համար բնորոշ է Իւանէի դիմումը վրաց թագաւորին՝ 1191 թուականից քիչ անց. «Դրանից յետոյ Կայէնի տէրը՝ մսախուրթ-ուխուցէս Իւանէն հրաւիրեց Դաւթին[31] արշաւանքի»[32]։ Հրաւէրը անսովոր է. հրաւիրողը ոչ թէ թագաւորն է՝ այլ նրա արքունի պաշտօնեան։ Նոյնը տեղի ունեցաւ տարիներ անց, 1208-ին. Արդաբիլի սուլթանի դէմ մեծ արշաւանք կազմակերպելիս՝ նախաձեռնողները նորից Զաքարէն էր եւ Իւանէն։ Կրօնական տօնի առթիւ նրանք ժամանել էին Գեղութ տեսակցելու Թամար թագուհուն հետ, երբ իմացան, որ Արդաբիլի սուլթանը անսպասելի ներխուժել է Հայաստան եւ կոտորած կազմակերպել Անիում։ Սուլթանից վրէժ առնելու նպատակով Զաքարեան եղբայրները որոշում են արշաւել Արդաբիլ եւ դիմում են թագուհուն. «Դու ով թագաւոր, ծանուցիր քո զօրականներին, որ պատրաստ լինեն Արդաբիլի վրայ արշաւելու։ Մենք գնանք Անիսի եւ պարսիկներից ում որտեղ գտնենք՝ որսանք։ [Մեծ թուով չենք գնայ] այլ փոքր, որովհետեւ եթէ մեծ թուով գնանք՝ կ'իմանան եւ կը մտնեն ամրոցները։ Փոքրաթիւ զօրքով օգնիր ինձ։ ... Թագաւորը հաւանեց նրանց ասածները։ Եւ թագաւորը հրամայեց, որ իր զօրականները պատրաստ լինեն։

«Եւ երկայնաբազուկները գնացին Անիսի եւ սկսեցին պատրաստուել»[33]։

Ուշադրութիւն պէտք է դարձնել, որ Զաքարեանները օգնական զօրք են խնդրում թագաւորից. վերջինը կարող էր զօրք տալ միայն որպէս դաշնակից՝ այլ ոչ թէ որպէս սիւզերէն իր վասալին։

Յաղթանակով վերադառնալով Արդաբիլից՝ Զաքարեանները չեն գնում Տփղիս ներկայանալու թագաւորին, ինչպէս կը վարուէր վասալը, այլ «եկան Անիսի», դրանից յետոյ գնացին Թամար թագուհու մօտ «բերելով նուէրներ»[34]։

Այդ փաստի առընչութեամբ Ղ. Թորոսեանը իրաւացիօրէն նկատում է, որ եթէ Զաքարեանները լինէին վրաց պետութեան քաղաքական համակարգում, ապա նրանք կը գնային Տփղիս, Թամար թագուհու մօտ, բայց նրանք գնում են Անի՝ իրենց պետութեան մայրաքաղաքը եւ միայն այնտեղից գնում թագուհու մօտ եւ տալիս նրան նուէրներ, ինչպէս բարեկամից բարեկամին[35]։

Դաշնակից կապերը աւելի սերտ էին դարձել սկսած 1197-1198 թուականներից։ «Թագակիրների»ի պատմիչը գրում է, որ «թագաւորի մօտ եկան ծառայելու երկու եղբայրներ, Սարգիս ամիրսպասալարի որդիները, որոնք այն ժամանակ յոյժ մեծարուել էին թագաւորի կողմից՝ ամիրսպասալար Զաքարէն եւ մսախուրթ-ուխու-

ցէս Իւանէն»[36]։

Քանի որ այդ մեծարումը տեղի է ունեցել Գանձակի գրաւումից յետոյ 1196 թուին՝ ուրեմն մօտաւորապէս 1197-1198 թուականներին, իսկ Սարգսի որդիները նշուած պաշտօնները ստացել էին 1191-ին, ապա պարզ է, որ մէջբերուած վկայութեան մէջ խօսքը գնում է Զաքարեաններ-վրաց թագաւորներ (իմա՝ հայկական սամթաւրօ-Վրաց թագաւորութիւն) կապերի նոր փուլի մասին։ Զաքարեան եղբայրները վրաց արքունիքում «ծառայութեան» մէջ էին 1197-1198 թուերին. շատ աւելի շուտ, 1185-1187 թուերին։ Ուրեմն տուեալ դէպքում, «ծառայութիւն» եզրոյթը (տերմինը) չունի իր սովորական (վասալական պարտականութիւն) իմաստը, այլ արտացոլում է «ծառայութեան» նոր բնոյթը՝ դաշնակից յարաբերութիւն, համագործակցութիւն, , ընդ որում՝ այդ համագործակցութեան աւելի բարձր աստիճան, որովհետեւ դաշնակից կապերը սկիզբ էին առել աւելի շուտ՝ 1185-ից։

Այդ նոր որակը պարզ արտայայտում է «Թագակիրների Պատմութեան» հեղինակի հետեւեալ հաղորդումը։

Արդաբիլի արշաւանքից շատ չանցած «ի յայտ եկան ուրիշ մեծագոյն գործեր»՝ գրում է պատմիչը։ Զաքարէն, Իւանէն, Վահրամ Գակեցին դիմում են Թագաւորին (Թամար Թագուհուն)՝ «... Նայիր եւ տես ձեր թագաւորութիւնը եւ ... իմացիր, որ քո զօրականների մէջ կը գտնուեն բազում առնացի, քաջ ընտիր մարտիկներ ... գինաւորուենք ... եւ հրամայիր Վրաստանի զօրքին որ պատրաստ լինեն արշաւելու Խորասան.

«... Երբ Թագաւորը լսեց Երկայնաբազուկների ասածը, հրաւիրեց այս թագաւորութեան բոլոր նշանաւոր մարդկանց ... եւ յայտնեց նրանց Երկայնաբազուկների ասածը։ Երբ լսեցին, որ Երկայնաբազուկները արշաւանքի կոչ են անում՝ բոլորին դուր եկաւ նրանց ասածը, որոշեցին արշաւել եւ սկսեցին պատրաստուել» ... այնուհետեւ տրւում է արշաւանքի մանրամասն նկարագիրը[37]։

Այս հաղորդման մէջ կարեւոր են հետեւեալ կէտերը.

ա. Զաքարեանները վրաց թագաւորութիւնը կոչում են «ձեր», «այս»։ Պարզ է, որ դա Զաքարեանների թագաւորութիւնը չէ։

բ. Զաքարեանները Թամարին ասում են՝ «հրամայիր Վրաստանի զօրքին»։ Ուրեմն, բացի Վրաստանի զօրքից՝ կար նաեւ այլ զօրք. պարզ է, որ դա Երկայնաբազուկների հայկական զօրքն էր, որը Վրաստանի զօրքի կազմում չէր։ Վրաց թագաւորը ունէր «իր զօրքը»[38]։

գ. Արշաւանքը նախաձեռնում են Զաքարեանները, իսկ Վրաս-

տանի նշանաւոր մարդոցն հաղորդում է այդ մասին, նրանք քննում են առաջարկը եւ հաւանութիւն տալիս (ի հարկէ, կարող էին եւ հաւանութիւն չտալ)։ Վասալները չէին կարող նման առաջարկ անել։ Ակնյայտ է, որ «ծառայ» բառը տուեալ դէպքում նշանակում է ոչ թէ վասալ, այլ՝ դաշնակից։

դ. «Այս թագաւորութեան բոլոր նշանաւոր մարդիկ լսելով երկայնաբազուկների առաջարկը» արտայայտութիւնը պարզ նշանակում է, որ երկայնաբազուկները «այս թագաւորութեան», այն է՝ Վրաց թագաւորութեան նշանաւոր մարդկանց թւում չէին։ Զաքարեանների սամթաւրոն Վրաց թագաւորութեան կազմից դուրս գտնուելու մասին Խ. Թորոսեանի եզրակացութիւնը հաստատող պերճախօս ապացոյց է։

Զաքարեան Հայաստանի կարգավիճակի նորովի հիմնաւորումը հնարաւորութիւն է ընձեռում ճշդելու կամ վերացնելու պատմագիտութեան մէջ ընդունուած, բայց, մեր կարծիքով, վիճելի առանձին տեսակէտներ։ Դրանցից մէկն է հայ պետականութեան անկման ժամանակի հարցը։ Աւանդաբար նրա կորուստը կապւում է Բագրատունեաց թագաւորութեան անկման հետ (Անիի գրաւումը Բիւզանդիայի կողմից 1045 թուին։ Իրականում այդպէս չէր։ ԺԲ. դարի վերջում հայ պետականութիւնը վերականգնւում է իշխանապետութեան կարգավիճակով։ Վերջինս նոյնպէս անկախ պետութիւն է, նրա հիմնադրման տարեթիւն է 1185 թուականը։ Նախորդ ուսումնասիրողները եւս ընդունում են, որ ԺԲ.-ԺԳ. դարերում Հայաստանը ունեցել է իշխանութիւն, բայց բնութագրում են այն որպէս ինքնավարութիւն[39]։ Խ. Թորոսեանի ուսումնասիրութիւնը նոր որակ է տալիս ԺԲ.-ԺԳ. դարերի հայ պետականութեան ուսումնասիրութեանը եւ բոլոր հիմքերը կան ընդունելու նոր դրոյթը, քանի որ այն ունի բաւարար աղբիւրագիտական բազա (ընդ որում, պէտք է նշել նաեւ թարգմանուող սկզբնաղբիւրի վերաբերեալ հեղինակի արժէքաւոր ծանօթագրութիւնները, թուով 300-ից աւելի)։

Գրախօսուող աշխատութիւնը սկզբնաւորում է նոր փուլ ժամանակակից հայ պատմագիտութեան մէջ, որը ուսումնասիրում է Զաքարեան դարաշրջանը։

Նրա արժէքն այն է, որ ԺԲ.-ԺԳ. դարերի հայ պետականութեան ուսումնասիրութիւնը դուրս է բերում հնացած շրջանակներից, նրանով սկիզբ է առնում դարաշրջանի ուսումնասիրման նոր՝ պատմաիրաւական վերլուծութեան փուլը, որը նախորդի՝ պատմա-բանասիրական փուլի տրամաբանական շարունակութիւնն

է եւ նոր որակ է տալիս դարաշրջանի պատմութեան լուսաբանմանը։ Նրանում շարադրուած եզրահանգումները կը խթանեն Զաքարեան Հայաստանի պատմութիւնը հասկանալու նոր՝ աւելի ճիշդ տեսանկիւնից։

ԴՈԿՏ. Ռ. Ի. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տես՝ Լ. Մելիքսէթ-Բեկ, *Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. Բ., Երեւան, 1936, էջ 7-25:
2. Տես՝ Խոսրով Թորոսեան, *"Թագակիրների Պատմութիւնն ու Գովաբանութիւնը" Որպէս Զաքարեան Հայաստանի եւ Զաքարեանների պատմութեան սկզբնաղբիւր*, Երեւան, 1992, էջ 116: Ցետայսմ՝ *"Թագակիրների Պատմութիւնը"*:
3. Մանրամասն տես՝ նոյն, էջ 138-145:
4. Նոյն, էջ 150:
5. Տես՝ նոյն, էջ 150-151:
6. Նոյն, էջ 153-155:
7. Նոյն, էջ 156 եւ 157:
8. Նոյն, էջ 162-165:
9. Նոյն:
10. Նոյն, էջ 166:
11. Նոյն, էջ 167-253:
12. Նոյն, էջ 180:
13. Նոյն, էջ 181-183:
14. Նոյն, էջ 187 եւ 188:
15. Նոյն, էջ 254-256:
16. Տես՝ նոյն:
17. Նոյն, էջ 256:
18. Նոյն, էջ 280-281:
19. Նոյն, էջ 283 եւ 331:
20. Նոյն, էջ 286-287:
21. Նոյն, էջ 313-315:
22. Նոյն, էջ 306, 319, 320, 324 եւ 330:
23. Նոյն, էջ 322:
24. Նոյն, էջ 321, 322 եւ 331:
25. Նոյն, էջ 331:
26. Նոյն, էջ 378, 387, 399, եւ այլք:
27. Նոյն, էջ 394, հմմտ. էջ 399:

28. Տես՝ Կ. Ղաֆադարեան, *Սանահնի Վանքը եւ Նրա Արձանագրութիւնները*, Երեւան, 1957, էջ 178:
29. "*Թագակիրների Պատմութիւնը*", էջ 415:
30. Նոյն:
31. Այսինքն՝ Դաւիթ Սոսլանին:
32. "*Թագակիրների Պատմութիւնը*", էջ 399:
33. Նոյն, էջ 439:
34. Նոյն, էջ 440:
35. Տես՝ նոյն, էջ 320-321:
36. Տես՝ նոյն, էջ 419:
37. Նոյն, էջ 441-442:
38. Նոյն, էջ 409:
39. Տես՝ *Հայ Ժողովրդի Պատմութիւն*, հտ. Գ., Երեւան, 1976, էջ 543-544:

Ռ. Մ.